

Հ Ա Ն Ք

ԵՒ ԻՐԵՆՑ ՍՏՈՒԳԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՆ

(Շար. տես էջ. 154)

Եղունգն

Ան բառեր որ այլ և այլ նշանակու-
թիւն ունին, յորոց մին ալ եղունգն է: Ինչ-
պէս օտար լեզուաց, նոյնպէս և մեր լեզուին
մէջ այս բառն նախ և առաջ կը նշանա-
կէ քաղցրորայր տեսակ խնկոյ, գործա-
ծական նուիրական տաճարաց մէջ. «Խումկս
ամուշումս, ստաշխմ, և եղունգն»¹. «Եղընգ-
նազոյն ըլլալուն Համար այսպէս կոչուած
է խունկս: Երկրորդ՝ Գրիչ կամ Գերոց.
«Երկաթի եղնգամբք քերել»²: Երրորդ մա-
տանց եղնգային մասն «Ոչ էր Ռատնալ զե-
ղընգունս իւր»³: Գորրորդ՝ քար պատուա-
կան. և առ շորրորդ նշանակութեան վրայ
պիտի խօսինք:

Ի Ս. Գիրս իբրեւ յարգի քար յիշուած
եղունգն, Հրէից քահանայապետին լանջանոցին
մետասաներորդ ակունքն էր, որուն վրայ
քանդակուած էր Յովսէփայ անունը. դար-
ձեալ Հաւանական կը կարծուի որ նոյն քա-
հանայապետը իբրեւ զարդ սոյն ագնիւ Հանքը
կը կրէր իւր երկու ուսերուն վրայ⁴. Եղունգն
կը Համարուի սպիտակ Ակաւտի տեսակ մը և
եղնգնազոյն ըլլալուն Համար, կոչուած է այս-
պէս: Այս բառը Լատինք, Իտալացիք և Գաղ-
ղիացիք յն. Հոմանիէիէն Օնջալս փոխ առած
են, իսկ մեր նախնիք, նոյն բառը Թարգմա-
նութեամբ անուաներ են եղունգն: Բառիս երբ.

Հոմանիէը բաղորովին տարբեր Հնչումն ունի
և կոչի ԸՂԽ = շոճամ:

Եղունգնի իբր Հոմանիչ կը Համարուին Հե-
տադայ բառերն. Եղնգնարար, Եղնգնարար,
Եղնգնարար⁵? Ղիւնգրոն, իսկ առ Երուսա-
ղիս նաեւ Սարգիստ և Ջմրիկտ: Այժմ անշիտթ
կերպով եղունգն բառն կը սեփականուի մի
միայն զղ. Օնջալս որ է Հոմանիչ վերայիշեալ
յն. Օնջալս արմատական բառին:

Երկամ

Հստ Ց. Ց. Հիւնքեարպէյէնտեանի ստու-
գարանական բառարանին, կը Համարուի յն.
ԵՐԿԱՆԸ = երկամթիւ (աշխատող) բառէն յա-
ռաջ եկած. յարգ. բանասիրի այս գիտութեւ,
չատ Հետաքրքրական է և անշուշտ անընդու-
նելի չի մնար: Հեղինակը իւր գիտն Հաս-
տատուելու Համար՝ կ'եղրակացնէ. «Արժամ
և Երկամ: Արծաթ յն. Զրչսրոց, մերձաւոր
է ձայնիւ ընդ բառիս Զրչոց, որ նշանակէ
ծող, պղերգ, դանդաղ. իսկ՝ երկամ ծագի
յն. Երչճերգ, որ նշանակէ աշխատող, վաս-
տակաւոր, դործոն»⁶...: Մի և նոյն գրքին
130 էջին մէջ, գեռ աւելի որոշ կը քացատրէ
իւր միտքը, այսպէս. «Ահա այս պատուա-
կան է որ երկամ նշանակել տալու Համար
Երչճերգ բառը ընտրուած է՝ իբրեւ դիմա-
բաժանեալ դամդաղի պայնքն, սրմամբոյ»:

Արշալի որ մետաղիս կիրառութիւնը ի վա-
ղուց ամէն աշխարհ Հանքացած էր, գինուց և
չատ գործածական շինուածոց Համար, և սա-
կայն կը տեսնենք որ առ նախնի Երայե-
ցիս, շատ մի կենդանեաց Հետ նաեւ սա
անտուրը կը Համարուի, և այս խօսքին ան-
շուշտ ապացոյց մ'է Ս. Գրքի խօսքն թէ «Եւ
շինեցես ամիլ հեղամ տեսում Աստուծոյ քոյ,
սեղամ ի քարամց. և մի Ռայնցի ի մոտս եր-
կամ»⁷:

Երկամ բառը առ նախնիս և այժմ ոչ
միայն Հասարակաց ծանօթ և գործածական

1. Եղ. 1. 54.

2. Զճ. զանգաւն ճառքնտիրք:

3. Թ. Թ. Թ. Թ. 24.

4. Sur les deux épaules du grand prêtre, étaient deux pierres nommées dans l'Hébreu *Sohem*; dans la Vulgate, *Onyx*; dans les Septante *des émeraudes* (որով ըստ եօթանասնից Հեռեռ. զեւթեան մեր Ս. Գրոց Թարգմանութեան մէջ փոխանակ եղունգնի զբառն է գմրոստ «Եր

անցես երկուս ականս զմիմուխտս, և գրես
ցիս ի նոսա զանոռանս որոցոցն իսրայելի»:
ԻԼ. 9.) Nous croyons que c'est la vraie si-
gnification du terme hébreu. *Sohem*, Հմա.
Diet. de la bible. Migne.

5. Հմա. Բազմաշիւք 1899. էջ 201:

6. Ստուգարանական բառարան Հայ լեզուի.
1894. ի կոտանիչ. աղ. Գ. Պաշտապետի

7. Երկ. Օրէնք. ԻԲ. 84

մետաղն կը նշանակէ, այլ ուրիշ զանազան իմաստներ ունի. զոր օրինակ մի տեղ սաստիկ կարծր նիւթոյ իմաստ մը կու տայ, Ս. Գիբբը կ'ըսէ թէ Պաղեստինու քարերը երկաթ են «... երկիր որոյ քարիմը իւր երկաթն է», այսինքն երկաթի կարծրութիւն ունին: Նշանակէ նաեւ ու է է գործիք մշակական և արհեստական, զէնք, շղթայ, և այլն, որոց վրայ գրադրին մեր նպաստակէն դուրս է:

Չմոռնա՛ք ըսելու որ, այժմ արհեստից մեծաքայլ զարգացմամբ, յառաջ եկան երկաթի զանազան տեսակներ, որոց գիտութիւնը առանձին անուններ որոշած է. զոր օրինակ այն երկաթն որ ի բնութեան երկաթաբեր գետնակներու մէջ կը գտնուի հոծ և հաստաձեւ կերպարանօք կոչի ինքնաքոյս երկաթ Fer natif. իսկ եթէ քլայ աձեւ, խոշոր զանգուած մը և գտնուի երկրի մակերեսոյթին վրայ՝ կոչի Ծանծաքար F. météorique. վերջապէս Պողովատ Acier, Ծանծա երկաթ Gousse և այլն, ամէնն ալ զանազան երկաթներ են:

Երկաթաքար

Նորակազմ բառերէն է Թարգմանութիւն յն. փոխառեալ գղ. Sidérite բառին:

Երկաթամ

Նորակազմ բառ մ'է Թարգմանութիւն յն. αμφοβολος (երկդիմի) հոմանիշին: Ասոր ուրիշ հոմանիշ կը համարուին. յն. տառադարձեալ բառն Ամփիքոյ, և կերպ կերպ Թարգմանութիւնը, զոր օրինակ նրկղլմաքար, Երկաթամը, հոմաքար:

Երկատես Հրատես

Այս բառը սեփականեցինք գղ. Diopside բառին, որ է հոմանիշ թափանցիկ սփզոյն կանաչ Որամտի: Ոմանք եւրոպական բառը տառադարձելով կոչած են Դիոպսիդ:

Երկղլմաքար

Բառիս մեկնութիւնը և հոմանիշները տես Ամփիքոյ և Երկաթամ բառերու բացատրութեանց մէջ:

Երկնասպան

Նորակազմ բառ, իբր հոմանիշ գղ. Cölestine բառին, որուն արդէն իսկ սեփականուած էր նրկղմաքար բառը, որ շատ ներդաշ-

նակ լինելով, աւելորդ էր նրկնասպան կէս հայ և կէս եւրոպ նոր բառն շինեն: Նրկնաքար բառը առաջին անգամ կազմեր է Հ. Քալուսի Ա. Թարգմանելով եւրոպական Cölestine հոմանիշ բառը:

Երկնակուց


Ընտիր, լաւ կազմուած ներդաշնակ բառ մ'է, զոր Հ. Մէնէլիշեանի հանքաբանութեան մէջ գործածուած կը տեսնենք, իբր հոմանիշ գղ. Malplaquet:

Զարիկ

Նախնիք այս բառս փոխ առած են պոսկ. آرسن = զէրմէ կամ آرسن = զէրմի բառէն, որ է հոմանիշ գղ. Arsenic, իտ. Arsenico, լատ. Arsenicum, որոնք եւս փոխ առնուած են յն. آرسينكون = արսէնիքով հոմանիշէն, որ կը Թարգմանուի մարդ ձրօտը, սպալմնմ نخاع :

Շարայարեղի

Հ. Ս. ԵՐԵՄ.



ԵԴՄՈՆԴՈՅ ԴԷ ԱՄԻՁԻՍ

Հ Ա Ռ Ե Բ

(Շար. տես էջ 202)

Դ.

ԱՂՋԻԿԵՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

(1895)

Չեմ կարող անկէ աւելի բան ըսելու՝ որչափ որ կ'ըսեն ձեզի դպրոցին մէջ այն կտրիճ և բարի դաստիարակները, որ կը բուրհն ձեր շորս կողմը ամէնէն աւելի զեղաշուք պսակը՝ որով մանկութիւնը կրնայ պատիւ ստանալ. և թէ նաեւ այսօր, ինչպէս միշտ, շատ աւելի երջանիկ են ձեր ուրախութեանը վրայ՝ քան թէ Հպարտ իրենց գործին: Մտիկ բրէք ուրեմ իմ խօսքերս՝